

Թուրքիոյ: Ասորիները՝ վստահ իրենց ամբողջ թիւններուն՝ անդիջող եղան, իսկ Բէդիրխան բէյը իր քաղաքական մեծ ձեռնարկներուն համար անհրաժեշտ կը նկատէր շրջապատի բոլոր ուժերու միացումը: Ու ան դիմեց բռնի ուժի: Թուրք կառավարութիւնն ալ քաջալերեց Բէդիրխան բէյը այդ շարժումին մէջ, յոյս ունենալով որ այդպիսով տեղի պիտի ունենար տեղական անվերջանալի պատերազմ մը, թուլցընելով երկու կողմերն ալ:

Բէդիրխանի արշաւանքը յաջող անցաւ: Ան կըրցաւ գրաւել ձուլամերկը՝ սրէ անցուց բազմաթիւ ասորիներ (Բաֆֆին իր «Տաճկահայք»-ի մէջ կոտորուած ասորիներու թիւը 10,000-ի կը հասցնէ), շատերը ստիպեց իսլամութիւնն ընդունելու, եւ ոմանց ալ միացուց իր բանակին:

Այս ցաւալի գործողութիւնը չպէտք է նրկատել թշնամութիւն մը ուղղուած քրիստոնեայ տարրի դէմ: Նոյն խստութիւնն Բէդիրխան բէյ ունեցած էր այն քիւրդ իշխանապետներուն դէմ, որոնք մինչեւ վերջ դիմադրած էին իրեն: Այսպէս, ասորիներու ջարդէն յետոյ, մենք կը տեսնենք Բէդիրխան բէյի զէնքը ուղղուած Մոկսի քիւրդ էմիր Արզալ բէյի դէմ: Այս վերջինը ամբացած Մոկսի հին բերդերուն մէջ, իրեն աջակից ունենալով Մոկսի հայ կռուողները՝ դիմադրեց բաւական ժամանակ, բայց յետոյ տեղի տուաւ Բոհթանի էմիրին, ու դարձաւ անոր մէկ դաշնակիցը:

Բէդիրխանը ատկէ յետոյ, առանց կոռուի մտաւ Մոկս, անցաւ Շատախ, ուր հայ իշխաններն իրենց ամբողջ զինեալներով միացան անոր՝ աւելի զօրացնելով քիւրդ-հայկական բանակը: Գաւաշի բէյը, Գուլի-Պան բէյի հայր Պան-Մահմուտը նոյնպէս դաշնակցեցաւ Բէդիրխանբէյին: Հէքեարիի զօրաւոր էմիրը, Նուրուլլահ բէյը դաշնակից մը դառնալով Բոհթանի էմիրի քաղաքական ծրագրին, իր կարգին ապստամբութեան դրօշակը բարձրացուց Թրքական կառավարութեան դէմ:

Այս յաղթական ծաւալումէն յետոյ Բէդիրխան բէյի տիրական դէմքը քրդական ամբողջ աշխարհի ուղադրութեան ու հիացմունքի առարկայ կը դառնար: Սղերդէն դէպի արեւմուտք տարածուած շրջանները, Շերվան, Մո-

տրզան, Պարզան եւ Սիլվան հակաթուրք տրամադրութիւններով կը լեցուէին, ու կը պատրաստուէին վրէժը լուծելու 6-7 տարի առաջ Հաֆըզ փաշայի գաղանային արարքներուն:

3.

Թրքական կառավարութիւնը յանկարծակիի կուգար: Անոր հաշիւները դռնէ այս անգամ անյաջողութեան մատնուած էին: Մօտակայ շրջաններու մէջ գտնուած Թրքական զօրերը պարտուած ու քաշուած էին: Թուրք կառավարութեան կը մնար նախ եւ առաջ խորամանկ միջոցներու դիմել, յոյս ունենալով որ այդ միջոցներով պիտի կարողանար պառակտել դաշնակից ուժերը, ու միեւնոյն ատեն՝ ժամանակ պիտի չահէր պատրաստելու մեծ բանակ մը՝ Քիւրդիստանի դէմ արշաւելու համար:

Այս գիտաւորութեամբ, սպարապետ Հաֆըզ փաշայի թելադրանքով, էրզրումի կուսակալը Բոհթան կը ղրկէ քիւրդ Մահմուտ էֆէնտին*), Բէդիրխանին հաղորդելու կառավարութեան թելադրանքները: Ատկէ տարի մը յետոյ նոյն Մահմուտ էֆէնտին ղրկուած է Հէքեարիի էմիր Նուրուլլահի մօտ, որ արդէն ապստամբութեան ձեռնարկած էր:

Կառավարութեան այս ձեռնարկները կատարեալ յաջողութիւն մը չունեցան: Սակայն, մասնակի յաջողութիւն մը պէտք է նկատել այն՝ որ Բէդիրխան բէյի եղբայրը, Պան-Մահմուտը (չպէտք է չիօթել Գաւաշի Պան-Մահմուտին հետ. երկուքն ալ ժամանակակիցներ են եւ մասնակցած են ապստամբութեան) համոզուելով Թուրք կառավարութեան խոստումներուն, էրզրում եկաւ եւ մեծ հիւրասիրութիւններու արժանացաւ: Կառավարութիւնը կ'ուզէր Պան-Մահմուտը իրեն պատանդ իր

*) Մահմուտ էֆէնտին լաւ գիտէր Թուրքերէն եւ քիւրդերէն լեզուները եւ ճկուն մէկն էր նման նուրբ միջնորդութեան մը համար: Այս այն Մահմուտ էֆէնտին է, որ յետագային ընդարձակ տեղեկութիւններ տուած է Վանի ռուս հիւպատոս Ալեքսանդր Ժաբային, որու ընդարձակ հաւաքածոյի վրայ հիմնուած՝ յայտնի փրոֆ. Lerch գրած է իր գիտական եւ քաղաքական ուսումնասիրութիւնը քիւրդերու մասին: